ԽԱՉԷՆ-ԽՕԽԱՆԱԲԵՐԴ ԱՄՐՈՑԸ ԵՒ ՆՐԱ ԻՇԽԱՆԱՏՈՀՄԸ Թ.-ԺԳ. ԴԱՐԵՐՈՒՄ (ՔՆՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)

Ալեքսան Յակոբեան

Մեծ Հայքի 15 նահանգներից 10-ը՝ Արցախի գրեթէ կենտրոնում՝ Խաչէնագետի հովտի միջնամասի աջ (հարաւային) ափին, կաթողիկոսանիստ Գանձասարի դէմ-դիմաց յառնող անտառապատ լեռան ժայռոտ գագաթին բազմած է Հայոց Արեւելից կողմերի նշանաւոր ամրոցներից մէկը՝ Խօխանաբերդը: Ըստ Է. դարի երկրորդ տասնամեակի կէսին շարադրուած «Աշխարհացոյց»-ի՝ դա Արցախի կենտրոնական գաւառներից մէկի՝ Մեծ Իրանքի (կոչուած նաեւ՝ Մեծ Առանք, Մեծարանք, Մեծիւրեանք) արեւմտեան մասն է:

Խօխանաբերդը զբաղեցնում է ծովի մակերեւոյթից 1812 մ բարձրութեամբ լեռան (որը ժողովուրդը կոչում է Թարխանաբերդ) ներկայումս անտառապատ գագաթը՝ մօտ 0,6 հա տարածքով: Պահպանուել են ժամանակին անմատչելի պարիսպների առանձին կտորներ՝ մինչեւ 5 մ բարձրութեամբ, երկու քառանկիւն, կրաստուաղ պատերով ջրամբարների փոսերը՝ 2-2,5 մ խորութեամբ, արեւելքում գտնուող կենտրոնական մուտքով անցնող ժայռափոր, 2-3 մ լայնութեամբ աստիճանները եւ բազմաթիւ շինութիւնների փոսահետքերը («նախնական հաշուումներով՝ կացարանների թիւն անցնում է յիսունից»[1]): Համարւում է, որ այդ միջնաբերդը կառուցուել է Սահլ Սմբատեան իշխանի ժամանակներում, որի յիշողութիւնը պահպանուել է լեռան ստորոտում գտնուող Սահլատափ հանդամասի անուան մէջ[2]: Միջնաբերդից ներքեւ՝ լեռան լանջին, փռուած են վարելահողի վերածուած տափարակներ, սակայն նրանց շրջագծով պահպանուել են շինութիւնների ու պարիսպների որոշ հետքեր: Աւելի ներքեւ՝ լանջի մի բարձունքի վրայ, Գառնաքար գիւղից մի փոքր վեր, գտնւում է Հաւապտուկ *կամ* Հաւոց պտուկ *անունով վանքը, որի եկեղեցիներից մէկի շինարարական արձանագրութիւնը գրուել է 1163 թ. («Յիշխանութեա՞ն Հասանա՝ որդո Վախտանգա»)[3], նաեւ՝ շրջակայ ընդարձակ գերեզմանոցը, որի տապանագրերը ԺԲ.-ԺԳ. դարերի թուագրումներ ունեն: Վանքից դէպի արեւմուտք՝ մէկ ուրիշ ժայռոտ բարձունքին, գտնւում են իշխանական ապարանքի աւերակները, որոնք ժողովուրդն անուանում է* Դարպասներ*: «Պահպանուել են ապարանքի պարսպի մեծ մասի հիմքերը՝ կիսակործան անկիւնային բուրգերով ու դարպասով, երկու սենեակի պատերն ու ծածկի որոշ մասեր, ինչպէս նաեւ մի քանի այլ սենեակների մնացորդներ»[4]: Բուն ապարանքի շինու-*

---

1 **Ս. Սարգսեան**, *Խաչէնի ամրոցները*, Ստեփանակերտ, 2002, էջ 77: Հմմտ. **Շ. Մկրտչեան**, *Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական յուշարձանները*, Եր., 1985, էջ 19:

2 Տե՛ս **Գ. Տէր-Յովհաննիսեանց**, *Բաղդասար մետրապոլիտ Հասան-Ջալալեանցի համառօտ կենսագրութիւն*, - «Փորձ», 1880, թիւ 5, էջ 133-134, ծնթ. 2 («Այս բերդից փոքր-ինչ դէպի արեւելք տարածւում է մի հարթ եւ բաւական ընդարձակ գետին, որ մինչեւ այսօր սոյն Սահլ իշխանի անուամբ կոչւում է Սահլատափ (Սահլի գետին): Այստեղ կան բազմաթիւ տների աւերակներ կարգաւ Խաչէն գետի երկարութեամբ դասաւորուած»):

3 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, *Արցախ*, կազմեց **Ս. Գ. Բարխուդարեան**, Եր., 1982, էջ 33 (N 70):

4 **Ա. Ղուլեան**, *Խաչէնի իշխանական ապարանքը*, - ԼՀԳ, 1984, թիւ 3, էջ 51: